ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքի խոսքը Տեղական ինքնակառավարման մարմինների օրվա առթիվ

10.11.2021

Տեղական ինքնակառավարման մարմինների հարգելի գործընկերներ, Շնորհավորում եմ բոլորիդ տեղական ինքնակառավարման համակարգի կազմավորման 25-ամյակի կապակցությամբ:

Հարգելի համայնքապետեր, ավագանու անդամներ և համայնքային ծառայողներ, իսկապես մեծ է Ձեր դերակատարումը պետական կառավարման համակարգում, քանզի հենց համայնքներն են հանդիսանում յուրաքանչյուր պետության ժողովրդավարության հիմնասյունն ու քաղաքական և քաղաքացիական իրավունքների իրացման առաջնային օղակը:

Մեծագույն հարգանքի ու երախտագիտության են արժանի հատկապես այն ՏԻՄ ներկայացուցիչները, ովքեր բարձր գիտակցումով են մոտեցել քաղաքացու կողմից շնորհված մանդատն իրացնելու գործընթացին՝ կարևոր ներդրում ունենալով պետականաշինության ու համայնքի շենացման գործում:

Ինչ խոսք, գործունեության 25 տարվա ընթացքում համակարգն անցել է կայացման դժվարին ուղի, որն աստիճանաբար մոտենում է իր վերջնակետին: Դրան են ուղղված ՏԻ ոլորտում իշխանության կողմից իրականացվող բարեփոխումները և օրենսդրական նախաձեռնությունները: Այդ ամենն իրականացվում է համայնքների կարողությունների հզորացման, տեղական մակարդակում մասնակցային կառավարման ու թափանցիկության բարձրացման նպատակով:

Եվ հենց այս համատեքստում է իրականացվում նաև համայնքների միավորումը, որի հիմքում համայնքային միավորի սոցիալ-տնտեսական զարգացումը և տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետ գործառումն ապահովելն է: Եվ ես համոզված եմ, որ Արմավիրի մարզում դեկտեմբերի 5-ին կայանալիք ՏԻՄ ընտրություններով մենք հաջող մեկնարկ կապահովենք մեր միավորված համայնքների զարգացման նոր և խոստումնալից շրջափուլի համար:

Տեղական ինքնակառավարման մարմինների հարգելի գործընկերներ, կրկին շնորհավորում եմ Ձեզ այս կարևոր օրվա առթիվ՝ մաղթելով արգասաբեր աշխատանք և բազում ձեռքբերումներ՝ ի շահ մեր ազգաբնակչության կյանքի որակի բարելավման և համայնքային իշխանության հզորացման: Առողջություն և արևշատություն բոլորիդ: